

«Ռիսկի գնահատումը իրականացնող գիտական կազմակերպություն (կենտրոն) նշանակելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2018 թվականի N _____-Ա

**ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԿԵՆՏՐՈՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մենդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Մենդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկի գնահատումը իրականացնող գիտական կազմակերպություն (կենտրոն) նշանակել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումը իրականացնող գիտական կազմակերպություն (կենտրոն) նշանակել «Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: